Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը Հայաստանի Հանրապետության և ՕՊԵԿ-ի միջազգային զարգացման հիմնադրամի միջև «Կանաչ, դիմակայուն և ներառական զարգացման երկրորդ ծրագիր» վարկային համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

**Հայաստանի Հանրապետության**
**արտաքին գործերի նախարարություն**

ՎԱՐԿ ԹԻՎ 16316P

ԿԱՆԱՉ, ԴԻՄԱԿԱՅՈՒՆ ԵՎ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԾՐԱԳԻՐ

# ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՕՊԵԿ-Ի ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ԵՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՄԻՋԵՎ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ՕՊԵԿ-ի Միջազգային զարգացման հիմնադրամի (ՕՊԵԿ հիմնադրամ) և Հայաստանի Հանրապետության (Վարկառու) միջև

Հաշվի առնելով, որ Վարկառուն Համաշխարհային բանկի հետ համագործակցությամբ կազմել է Կայուն զարգացման ծրագիր՝ Հայաստանում կանաչ, դիմակայուն և ներառական զարգացումը խթանելու նպատակով,

հաշվի առնելով, որ վերոնշյալ նպատակով Վարկառուն 2024 թվականի օգոստոսի 28-ին ՕՊԵԿ հիմնադրամ է ուղարկել զարգացման քաղաքականության մասին գրություն, որտեղ ներկայացվել են ծրագրի նպատակները, քաղաքականություններն ու գործողությունները, և ՕՊԵԿ հիմնադրամին խնդրել է տրամադրել վարկ՝ 1-ին հավելվածում նկարագրված Կանաչ, դիմակայուն և ներառական զարգացման երկրորդ ծրագրի (Ծրագիր) մասնակի ֆինանսավորման համար,

հաշվի առնելով, որ ՕՊԵԿ հիմնադրամը հաստատել է Վարկառուին հիսուն միլիոն եվրոյի (€50,000,000) չափով գումարի տրամադրումը՝ ստորև սահմանված պայմաններով (Վարկ), և

հաշվի առնելով, որ ՕՊԵԿ հիմնադրամը որոշել է Վարկը տրամադրել, ի թիվս այլնի, հաշվի առնելով հետևյալը՝ ա) Ծրագրի շրջանակներում Վարկառուի կողմից արդեն իսկ ձեռնարկված գործողությունները, որոնք նկարագրվել են 1-ին հավելվածում, և բ) Վարկառուի կողմից պատշաճ մակրոտնտեսական քաղաքականության շրջանակ վարելու հանգամանքը,

հետևաբար սույն Վարկային համաձայնագրի (Համաձայնագիր) կողմերը համաձայնում են հետևյալի մասին.

Հոդված 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

1.01. Սույն Համաձայնագրին կցված Ընդհանուր պայմանները համարվում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

1.02. Ի լրումն նախաբանում ներկայացված եզրույթների՝ հետևյալ եզրույթներն ու արտահայտություններն ունեն հետևյալ իմաստները կամ Ընդհանուր պայմաններում նշված եզրույթներն ու արտահայտությունները վերարտադրվելու դեպքում՝ հետևյալ կոնկրետ իմաստները.

ա) Վարկառուի «լիազորված ներկայացուցիչ» նշանակում է դրա Ֆինանսների նախարարը,

բ) «Ավարտի ամսաթիվ» նշանակում է 2025 թվականի հունիսի 30-ը կամ այդպիսի այլ ամսաթիվ, որը ՕՊԵԿ հիմնադրամը հաստատում է իր հայեցողությամբ,

գ) «Մարման ամսաթիվ» նշանակում է 3-րդ հավելվածում սահմանված՝ Վարկի յուրաքանչյուր կիսամյակային մարման ամսաթիվ,

դ) «Հատկացման ընթացակարգեր» նշանակում է ՕՊԵԿ հիմնադրամի հատկացման ընթացակարգերը,

ե) «Թույլատրելի ծախսեր» նշանակում է Ծրագրի աջակցման նպատակով Վարկային միջոցների՝ ցանկացած ձևով օգտագործումը, որն ընդունելի է ՕՊԵԿ հիմնադրամի համար,

զ) «ԵՎՐԻԲՈՐ» նշանակում է Տոկոսների հաշվարկման յուրաքանչյուր ժամանակահատվածի համար եվրոյի նկատմամբ կիրառելի առաջարկի եվրոպական միջբանկային դրույքաչափ, որը սահմանվում է Եվրոպական բանկային ֆեդերացիայի (ԵԲՖ) կողմից ԿԵԺ-ով ժամը 11:00-ի դրությամբ: Այնուհանդերձ, եթե այս սահմանման վերոնշյալ տեքստին համապատասխան սահմանված դրույքաչափը զրոյից ցածր է, ապա ԵՎՐԻԲՈՐ-ը համարվում է զրո:

Ավելին, եթե ՕՊԵԿ հիմնադրամը սահմանում է, որ i) ԵՎՐԻԲՈՐ-ն այլևս չի նշվում համապատասխան արժույթի համար, կամ ii) ՕՊԵԿ հիմնադրամն այլևս չի կարող կիրառել ԵՎՐԻԲՈՐ-ը, կամ ՕՊԵԿ հիմնադրամի համար առևտրային տեսանկյունից այլևս ընդունելի չէ ԵՎՐԻԲՈՐ-ի կիրառումը նրա ակտիվների և պարտավորությունների կառավարման նպատակով, ՕՊԵԿ հիմնադրամը համապատասխան արժույթի համար կիրառում է այդպիսի այլ բազային դրույքաչափ, այդ թվում՝ ցանկացած կիրառելի սպրեդ, որն այն կարող է ողջամտորեն սահմանել: ՕՊԵԿ հիմնադրամն անհապաղ ծանուցում է Վարկառուին այդպիսի այլ դրույքաչափի և դրա հետ կապված՝ Վարկային համաձայնագրի դրույթների փոփոխությունների մասին, որոնք ուժի մեջ են մտնում այդ ծանուցման ամսաթվի դրությամբ,

է) «եվրո» և «€» նշանը նշանակում է Եվրոպական արժութային միության օրինական արժույթ և վերաբերում է դրան,

ը) «Իրականացնող գործակալություն» նշանակում է Վարկառուի ֆինանսների նախարարություն,

թ) «Ընդհանուր պայմաններ» նշանակում է պետական հատվածի վարկային համաձայնագրի նկատմամբ կիրառելի Ընդհանուր պայմաններ՝ 2019 թվականի հունիսի դրությամբ,

ժ) «Արտոնյալ ժամկետ» նշանակում է ժամանակահատված, որը մեկնարկում է Համաձայնագրի կնքման ամսաթվից և ավարտվում է այդ ամսաթվից հինգ (5) տարի անց,

ժա) «Տոկոսների որոշման ամսաթիվ» նշանակում է Տոկոսների հաշվարկման ժամանակահատվածի մեկնարկից առաջ երկրորդ Աշխատանքային օրը,

ժբ) «Տոկոսների վճարման ամսաթիվ» նշանակում է ցանկացած տարվա ցանկացած օր, երբ պետք է վճարվի Վարկի նկատմամբ հաշվեգրվող տոկոսը՝ պայմանով, որ, եթե ցանկացած այդպիսի օր Աշխատանքային օր չէ, ապա

Տոկոսների վճարման ամսաթիվը, որն այլապես կլիներ այդ օրը, ընկնում է հաջորդ Աշխատանքային օրը,

ժգ) «Տոկոսների հաշվարկման ժամանակահատված» նշանակում է յուրաքանչյուր վեցամսյա ժամանակահատված (կամ այնպիսի ժամանակահատված, որի դեպքում հաջորդող Տոկոսների որոշման ամսաթվերը և դրա հետ կապված Տոկոսների վճարման ամսաթվերը կարող են համընկնել առհանմանը անմիջապես նախորդող տոկոսների որոշման ամսաթվի հետ), որը մեկնարկում է Տոկոսների վճարման ամսաթվից և ավարտվում է Տոկոսների վճարման հաջորդ ամսաթվին նախորդող օրը՝ բացառությամբ առհանման նկատմամբ կիրառվող Տոկոսների հաշվարկման առաջին ժամանակահատվածի, որի դեպքում այն նշանակում է ժամանակահատված, որը մեկնարկում է առհանում կատարելու օրը և ավարտվում է Տոկոսների վճարման հաջորդ ամսաթվին նախորդող օրը, և

ժդ) «Տոկոսադրույք» նշանակում է Վարկի նկատմամբ վճարման ենթակա տոկոսադրույք, որը սահմանվում է 2.02 կետին համապատասխան:

* * *

## Հոդված 2

## <u>ՎԱՐԿԸ</u>

2.01. ՕՊԵԿ հիմնադրամը համաձայնում է Վարկառուին տրամադրել, իսկ Վարկառուն համաձայնում է ՕՊԵԿ հիմնադրամից փոխառել հիսուն միլիոն եվրոյի չափով Վարկ (€50,000,000)՝ սույն համաձայնագրով սահմանված պայմաններով:

2.02. Սույն վարկի նպատակներով՝

ա) Տոկոսադրույքը Տոկոսների հաշվարկման ցանկացած

ժամանակահատվածի համար համարվում է այն դրույքաչափը, որը կազմում է ԵՎՐԻԲՈՐ-ի վեց (6) ամսվա գումարը՝ գումարած առհանված և չվճարված գումարների նկատմամբ տարեկան հաշվեգրված մեկ ամբողջ հիսունվեց հարյուրերորդական տոկոսը (1.56%):

բ) Տոկոսների հաշվարկման յուրաքանչյուր ժամանակահատվածի ընթացքում Վարկի նկատմամբ հաշվեգրվում է տոկոս սույն կետում սահմանված Տոկոսադրույքով:

գ) Տոկոսները հաշվեգրվում են օրեցօր և համամասնորեն բաշխվում են ըստ Տոկոսների հաշվարկման համապատասխան ժամանակահատվածում առկա օրերի փաստացի թվի՝ տարեկան երեք հարյուր վաթսուն (360) օրվա հաշվարկով, և ենթակա են վճարման Տոկոսների վճարման ամսաթվի դրությամբ՝ Տոկոսների հաշվարկման ժամանակահատվածի ավարտից անմիջապես հետո:

դ) ՕՊԵԿ հիմնադրամի կողմից Տոկոսադրույքների վերաբերյալ կայացված որոշումը վերջնական ու անվիճարկելի է և պարտադիր է Վարկառուի համար, եթե Վարկառուն ՕՊԵԿ հիմնադրամին չի ապացուցում, որ որոշման մեջ առկա է վրիպակ:

ե) Վարկառուն կարող է, համաձայն Ընդհանուր պայմանների 11.04 բաժնի, Վարկի ժամկետի ընթացքում ցանկացած պահի ներկայացնել տոկոսադրույքի վերանայման գրավոր հարցում, և ՕՊԵԿ հիմնադրամը կքննարկի այդ հարցումը, ինչը ենթակա է ներքին հաստատման:

2.03. Վարկառուն վճարում է կոմիսիոն վճար՝ Վարկի չառհանված գումարի նկատմամբ տարեկան հաշվեգրվող մեկ քառորդ (0.25%) տոկոսի չափով, և այդ վճարի հաշվեգրումը կսկսվի Համաձայնագրի կնքման ամսաթվից վաթսուն (60) օր հետո և ենթակա է վճարման սկզբնապես՝ Ուժի մեջ մտնելու ամսաթվից հետո իննսուն (90) օրվա ընթացքում: Տարընթերցումից խուսափելու համար կոմիսիոն վճարը ենթակա չէ վճարման, եթե Համաձայնագիրը դադարեցվել է ուժի մեջ չմտնելու պատճառով:

2.04. Վարկառուն վճարում է միանվագ կոմիսիոն վճար՝ Վարկի մեկ քառորդ (0.25%) տոկոսի չափով, որը ենթակա է վճարման Ուժի մեջ մտնելու ամսաթվից հետո իննսուն (90) օրվա ընթացքում:

2.05. Տոկոսը և կոմիսիոն վճարը (բացառությամբ առաջին վճարման, որը կատարվում է 2.03 կետում ամրագրված կարգով) վճարվում են ՕՊԵԿ հիմնադրամի հաշվին յուրաքանչյուր կիսամյակ՝ յուրաքանչյուր տարվա հունիսի 15-ին և դեկտեմբերի 15-ին:

2.06. Վարկառուն մարում է Վարկի մայր գումարը եվրոյով կամ ՕՊԵԿ հիմնադրամի համար ընդունելի ազատ փոխարկելի ցանկացած այլ արժույթով՝ եվրոյով արտահայտված գումարին համարժեք գումարի չափով, որը վճարվում է մարման պահին և վայրում գործող շուկայական փոխարժեքով: Մարման գործընթացը մեկնարկում է Արտոնյալ ժամկետի ավարտից հետո և իրականացվում է քսանվեց (26) կիսամյակային վճարումներով՝ յուրաքանչյուրը՝ Մարման համապատասխան ամսաթվի համար 3-րդ հավելվածում (ԱՍՏԻՃԱՆԱԿԱՆ ՄԱՐՈՒՄ) ամրագրված կարգով ՕՊԵԿ հիմնադրամի կողմից սահմանված գումարի չափով:

2.07. Համաձայնագրի կնքման ամսաթիվն այն ամսաթիվն է, երբ այն ստորագրվել և թվագրվել է այն կողմի լիազորված ներկայացուցչի կողմից, որը վերջինն է ստորագրել և թվագրել այն:

* * *

## Հոդված 3

## ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

3.01. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում և գործում է 3.02 կետին համապատասխան՝ ՕՊԵԿ հիմնադրամի կողմից հետևյալը ստանալուն պես.

ա) բավարար ապացույցներ, որ Վարկառուի անունից ձևակերպված և հանձնված սույն Համաձայնագիրը պատշաճ ձևով հաստատվել և վավերացվել է Վարկառուի օրենսդրական պահանջների համաձայն, և

բ) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի կողմից տրամադրված իրավաբանական եզրակացություն, որով հաստատվում է, որ սույն Համաձայնագիրը պատշաճ ձևով հաստատվել և վավերացվել է Վարկառուի կողմից ու համարվում է Վարկառուի գործող և պարտադիր պարտավորության մաս՝ դրա պայմաններին համապատասխան:

3.02. 3.01 կետում ամրագրված պայմանների գոհացուցիչ իրագործումից հետո, որքան հնարավոր է շուտ, սույն Համաձայնագիրը մտնում է լիակատար ուժի մեջ և գործում է Ուժի մեջ մտնելու ամսաթվի դրությամբ:

3.03. Եթե սույն Համաձայնագիրը գործողության մեջ չի մտնում Համաձայնագիրը կնքելու ամսաթվից հետո հարյուր ութսուն (180) օրվա ընթացքում, Համաձայնագիրը և դրանով սահմանված կողմերի բոլոր պարտավորությունները դադարում են, եթե ՕՊԵԿ հիմնադրամը, ուսումնասիրելով ուշացման պատճառները, սույն կետի նպատակներով սահմանում է ավելի ուշ ամսաթիվ:

* * *

Հոդված 4

<u>ԾՐԱԳԻՐԸ</u>

4.01. Վարկառուն հայտարարում է Ծրագրի և դրա իրականացման մասով իր հանձնառությունը: Այս և Ընդհանուր պայմանների 7.06 կետի նպատակներով՝

ա) Վարկառուն և ՕՊԵԿ հիմնադրամը ժամանակ առ ժամանակ կողմերից որևէ մեկի խնդրանքով կարծիքներ են փոխանակում Վարկառուի մակրոտնտեսական քաղաքականության շրջանակի և Ծրագրի իրականացման գործընթացում արձանագրված առաջընթացի վերաբերյալ,

բ) մինչև կարծիքների յուրաքանչյուր փոխանակում՝ Վարկառուն ՕՊԵԿ հիմնադրամի դիտարկմանը և մեկնաբանությանն է ներկայացնում Ծրագրի

իրականացման գործընթացում արձանագրված առաջընթացի վերաբերյալ հաշվետվությունն այնքան մանրամասն, որքան ողջամտորեն պահանջում է ՕՊԵԿ հիմնադրամը, և

գ) չսահմանափակելով սույն կետի «ա» պարբերությունը՝ Վարկառուն անհապաղ տեղեկացնում է ՕՊԵԿ հիմնադրամին ցանկացած իրավիճակի մասին, որի հետևանքով էապես փոփոխվում են Ծրագրի կամ Ծրագրի շրջանակներում ձեռնարկված ցանկացած գործողության, այդ թվում՝ սույն Համաձայնագրի 1-ին հավելվածում ամրագրված գործողությունների նպատակները:

* * *

Հոդված 5

ՎԱՐԿԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՀԱՏԿԱՑՈՒՄԸ

5.01. Վարկային միջոցները օգտագործվում են սույն Համաձայնագրի 1-ին հավելվածում ամրագրված և ՕՊԵԿ հիմնադրամի համար ընդունելի նպատակներով:

5.02. Որևէ հատկացում չի կատարվում, քանի դեռ ՕՊԵԿ հիմնադրամին չեն գոհացրել՝ ա) սույն Համաձայնագրի 1-ին հավելվածում ամրագրված նախնական միջոցառումների կատարման առնչությամբ ներկայացված ապացույցները, բ) Վարկառուի կողմից իրականացվող Ծրագրի առաջընթացը, և գ) Վարկառուի մակրոտնտեսական քաղաքականության շրջանակի համապատասխանությունը:

5.03. Վարկը հատկացվում է մեկ տրանշով Վարկը ուժի մեջ մտնելու մասին հայտարարելուց, վերևում՝ 5.02 կետում ամրագրված պայմանները գոհացուցիչ ձևով իրականացնելուց և Վարկառուի կողմից առհանման հայտ ներկայացվելուց հետո: Հատկացումը կատարվում է սույն Համաձայնագրի համապատասխան կետերի համաձայն, ներառյալ՝ 2-րդ հավելվածը՝ Վարկի տրամադրումը, Ընդհանուր պայմանները և ՕՊԵԿ հիմնադրամի՝ հատկացման ընթացակարգերը:

5.04. Վարկառուն ներկայացնում է հաշիվ (Վարկային հաշիվ), և Վարկից ստացված եկամուտներն ՕՊԵԿ հիմնադրամի կողմից փոխանցվում են Վարկառուի վարկային հաշվին Հայաստանի կենտրոնական բանկում առկա՝ Վարկառուի գանձապետական միասնական հաշվի միջոցով, որի մանրամասների մասին Վարկառուի կողմից պետք է պատշաճ ծանուցվի ՕՊԵԿ հիմնադրամին՝ առհանման հայտի մեջ: Վարկային միջոցները համարվում են Վարկառուի կողմից առհանված՝ փոխանցման ամսաթվից սկսած: Վարկային հաշվից ստացվող ցանկացած տոկոս չի համարվում Վարկի մայր գումարի մաս՝ Վարկի մարման նպատակներով:

5.05. Վարկառուի լիազորված ներկայացուցիչը կամ Վարկառուի կողմից նշանակված և ՕՊԵԿ հիմնադրամ ներկայացված այդպիսի այլ անձ (անձինք) լիազորված է (են) կատարելու Վարկային հաշվից առհանումներ:

5.06. Վարկառուն Վարկային հաշվից վարկի առհանումից հետո երեսուն (30) օրվա ընթացքում ՕՊԵԿ հիմնադրամին է ներկայացնում՝ ա) տեղեկություն այն մասին, որ Վարկառուի բյուջեի կառավարման համակարգերում համարժեք գումար է հաշվարկվել, և բ) Վարկից ստացված եկամուտների մասով Վարկային հաշվի մուտքերի և ծախսերի մասին քաղվածքը: Այնուհետև ՕՊԵԿ հիմնադրամի պահանջով Վարկառուն տրամադրում է Վարկառուն տրամադրում է ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական կայքում հրապարակված պետական բյուջեի կատարման եռամսյակային հաշվետվությունները:

* * *

Հոդված 6

ՀԱՍՑԵՆԵՐԸ

6.01. Կողմերի հասցեները նշված են ստորև՝

ՕՊԵԿ հիմնադրամի կողմից՝
Միջազգային զարգացման ՕՊԵԿ հիմնադրամ
Փարքրինգ 8
Ա-1010, Վիեննա
ԱՎՍՏՐԻԱ
Ֆաքսիմիլ՝ (+43-1) 513 92 38

Վարկառուի կողմից՝
Ֆինանսների նախարարություն
Մելիք-Ադամյան 1,
Երևան
ՀԱՅԱՍՏԱՆ
Հեռ.՝ +37411 800 333

* * *

Ի ՀԱՍՏԱՏՈՒՄՆ որի՝ սույն համաձայնագրի կողմերը՝ ի դեմս նրանց պատշաճ ձևով լիազորված ներկայացուցիչների, ստորագրել և հանձնել են սույն Համաձայնագիրը՝ նամակագրությամբ, երկու օրինակից՝ անգլերեն, որոնցից յուրաքանչյուրը համարվում է բնօրինակ. երկուսն էլ հավասարազոր են և գործողության մեջ են մտնում Համաձայնագրի կնքման ամսաթվի դրությամբ:

ՕՊԵԿ-ի ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ՝

Ստորագրություն՝ ստորագրված

Անուն՝ դոկտոր Աբդուլհամիդ Ալխալիֆա

Պաշտոն՝ Նախագահ

Ամսաթիվ՝ 2024թ. նոյեմբերի 5

ՎԱՐԿԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ՝

Ստորագրություն՝ ստորագրված

Անուն՝ Ձերդ գերազանցություն Վահե Հովհաննիսյան

Պաշտոն՝ Ֆինանսների նախարար

Ամսաթիվ՝ 2024թ. նոյեմբերի 12

* * *

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԱՆԱՉ, ԴԻՄԱԿԱՅՈՒՆ ԵՎ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԾՐԱԳԻՐ

## ՀԱՎԵԼՎԱԾ 1

## ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1.01. Ծրագրի նպատակն է խթանել Հայաստանում կանաչ, դիմակայուն և ներառական զարգացումը՝ նպաստելով կլիմայի փոփոխության հետևանքների մեղմացմանն ու հարմարվողականությանը, բարելավելով շրջակա միջավայրի կառավարումը և էներգաարդյունավետությունը, ապահովելով հավասարության ավելի բարձր մակարդակ և խթանելով մարդկային կապիտալի զարգացումը, ինչպես նաև ամրապնդելով կառավարումը:

2.01. Վարկը տրամադրվում է ի աջակցություն Ծրագրի, մասնավորապես՝ այն նախնական միջոցառումների, որոնք Վարկառուն իրականացրել է բարեփոխումների օրակարգի երեք (3) ուղղություններով, որոնք մանրամասն ներկայացվել են ստորև.

ա) Ուղղություն 1. Կլիմայի փոփոխության մեղմացման և հարմարվողականության խթանում ու շրջակա միջավայրի կառավարման համար կարգավորող շրջանակի բարելավում, որը բաղկացած է հետևյալ նախնական միջոցառումներից.

i) *Նախնական միջոցառում 1. Էներգաարդյունավետության խթանում.* Շենքերում և ենթակառուցվածքներում կլիմայի փոփոխության նկատմամբ դիմակայունությունը և էներգաարդյունավետությունն ուժեղացնելու նպատակով Վարկառուն իր Քաղաքաշինության կոմիտեի միջոցով 2022 թվականի դեկտեմբերի 22-ի 31-Ն հրամանով հաստատել է շինարարական նոր նորմեր՝ շենքերի էներգաարդյունավետության ապահովման և էներգաարդյունավետության գնահատման ցուցանիշներ սահմանելու համար,

ինչպես հրապարակված է Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգում 2023 թվականի հունվարի 3-ին և ուժի մեջ է մտել 2023 թվականի հունվարի 4-ին:

ii) *Նախնական միջոցառում 2. Մթնոլորտային օդի պահպանություն.* Օդի աղտոտվածության դիտանցման նոր համակարգի իրականացման համար Վարկառուն իր գործադիր իշխանության միջոցով՝ i) 2024 թվականի հունվարի 4-ին ընդունել է Կառավարության թիվ 23-Ն որոշումը ստորագրված Վարչապետի կողմից, հրապարակված Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգում 2024 թվականի հունվարի 5-ին, ուժի մեջ մտած 2024 թվականի հուլիսի 1-ին, որով կարգավորվում է մթնոլորտային օդն աղտոտող (վնասակար) նյութերի արտանետումների պետական հաշվառման և հաշվառման վերաբերյալ տեղեկատվության գրանցման, ամփոփման, վերլուծման և արխիվացման կարգը, և ii) 2024 թվականի հունվարի 4-ին ընդունել է Կառավարության թիվ 32-Ն որոշումը ստորագրված Վարչապետի կողմից, հրապարակված Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգում 2024 թվականի հունվարի 9-ին, ուժի մեջ մտած 2024 թվականի մարտի 9-ին, որով հաստատվում է մթնոլորտային օդն աղտոտող (վնասակար) նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների նախագծերի մշակման և սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների նախագիծ ներկայացրած իրավաբանական անձանց և ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող ֆիզիկական անձանց՝ արտանետման թույլտվությունների տրամադրման կամ մերժման կամ ուժը կորցրած ճանաչելու մասին կարգը:

*Նախնական միջոցառում 3. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում.* Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նոր համակարգի իրականացման համար Վարկառուն իր գործադիր իշխանության միջոցով՝ i) ընդունել է Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 2343-Ն որոշումը ստորագրված Վարչապետի կողմից, հրապարակված Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի կայքէջում 2023

թվականի դեկտեմբերի 29-ին, ուժի մեջ մտած 2023 թվականի դեկտեմբերի 30-ին՝ հանրության իրազեկման և հանրային լսումների ընթացակարգի հստակությունն ու թափանցիկությունը բարելավելու նպատակով, և ii) ընդունել է Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 2294-Ն որոշումը ստորագրված Վարչապետի կողմից, հրապարակված Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի կայքէջում 2023 թվականի դեկտեմբերի 25-ին, ուժի մեջ մտած 2023 թվականի դեկտեմբերի 25-ին Ռազմավարական էկոլոգիական գնահատման (ՌԷԳ) մասին, որով կարգավորվում է ՌԷԳ կարգը, և սահմանվում են ՌԷԳ շրջանակը և ՌԷԳ հաշվետվությանը ներկայացվող պահանջները:

բ) <u>Ուղղություն 2. Հավասարության ամրապնդում և մարդկային կապիտալի զարգացման խթանում</u>, որը բաղկացած է հետևյալ նախնական միջոցառումներից.

i) *Նախնական միջոցառում 4. Լեռնային Ղարաբաղի փախստականների նոր խոցելի խմբի կարիքների աջակցության նպատակով* Վարկառուն՝ ա) իր գործադիր իշխանության միջոցով ընդունել է Կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 1864-Ն որոշումը՝ հրապարակված Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի կայքէջում 2023 թվականի հոկտեմբերի 27-ին, ուժի մեջ մտած 2023 թվականի հոկտեմբերի 28-ին՝ մեկ տարի ժամկետով ժամանակավոր պաշտպանության կարգավիճակ տալով այդ խմբին, և բ) իր գործադիր իշխանության միջոցով հաստատել է Կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 1756-Լ որոշումը՝ հրապարակված Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի կայքէջում 2023 թվականի հոկտեմբերի 12-ին, ուժի մեջ մտած 2023 թվականի հոկտեմբերի 13-ին՝ մարդկային կապիտալի զարգացմանն ու զբաղվածությանը նպաստելու նպատակով փախստական ուսուցիչներին, այդ թվում՝ կին ուսուցիչներին Հայաստանում աշխատելու համար աջակցություն տրամադրելով:

ii) *Նախնական միջոցառում 5. Դեպի ուսումնառության վերջնարդյունքներ*

*ուղղվող՝ կարողությունների վրա հիմնված նոր կրթական ծրագրի ներդրում.* Կարողությունների վրա հիմնված նոր կրթական ծրագրի իրականացմանն աջակցելու նպատակով Վարկառուն Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության միջոցով ընդունել է Նախարարի 2024 թվականի հունվարի 16-ի թիվ 50-Ա/2 հրամանը հրապարակված Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պաշտոնական կայքէջում, ուժի մեջ մտած 2024 թվականի հունվարի 16-ին՝ վերանայելով ուսումնառության արդյունքներին հետևելու և դրանք օգտագործելու վերաբերյալ Սովորողների գնահատման ազգային շրջանակը՝ կրթական համակարգի դիտանցման և բարելավման նպատակով:

iii) *Նախնական միջոցառում 6. Բժշկական ծառայությունների որակի բարելավում.* Բժշկական ծառայությունների որակը բարելավելու և պահպանելու նպատակով Վարկառուն՝ i) 2023 թվականի մայիսի 24-ին հաստատել է Լիցենզավորման մասին 2001 թվականի մայիսի 30-ի ՀՕ-193 օրենքում կատարվող փոփոխությունը հաստատված Ազգային ժողովի կողմից և ստորագրված Հայաստանի Նախագահի կողմից, հրապարակված Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի կայքէջում 2023 թվականի հունիսի 13-ին, ուժի մեջ մտած 2024 թվականի հունիսի 14-ին անժամկետ լիցենզավորումից հինգ տարի ժամկետով լիցենզավորման անցնելու մասին, և ii) առողջապահության նախարարության միջոցով ընդունել է Նախարարի 2023 թվականի ապրիլի 25-ի թիվ 2068-Լ հրամանը ստորագրված առողջապահության նախարարի կողմից, հրապարակված առողջապահության նախարարության պաշտոնական կայքէջում, ուժի մեջ մտած 2023 թվականի ապրիլի 25-ին՝ թարմացնելով գործող պայմանագրային մեխանիզմը, այդ թվում՝ կատարողականի վրա հիմնված լրացուցիչ վարձատրության կարգը, որով խթանվում է առողջության առաջնային պահպանման (ԱԱՊ) հասանելիության բարելավումը (կանխարգելիչ և մինչև հոսպիտալացումն իրականացրած այցերի ապահովում), և աճում են ԱԱՊ բժիշկների վարձատրման ցուցանիշները:

գ) <u>Ուղղություն 3. Հակակոռուպցիոն շրջանակի և արդարադատության ոլորտի արդյունավետության բարձրացում</u>, որը բաղկացած է հետևյալ նախնական միջոցառումներից.

i) *Նախնական միջոցառում 7. Կարգավորման ազդեցության գնահատում.* Քաղաքականության մշակման որակը բարելավելու նպատակով Վարկառուն իր գործադիր իշխանության միջոցով Կառավարության 2023 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 2053-Լ որոշմամբ հաստատել է կարգավորման ազդեցության գնահատման (ԿԱԳ) մեթոդական ուղեցույցը ստորագրված Վարչապետի կողմից, հրապարակված Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգում 2023 թվականի նոյեմբերի 29-ին, ուժի մեջ մտած 2024 թվականի նոյեմբերի 30-ին՝ գնահատելու ԿԱԳ-ով կարգավորվող հինգ ոլորտների (տնտեսական, այդ թվում՝ գործարար միջավայրի և մրցակցության, սոցիալական, առողջապահական, շրջակա միջավայրի և հանրային ֆինանսների ոլորտները) վրա կիրառելի կարգավորման ազդեցությունը:

ii) *Նախնական միջոցառում 8. Կոռուպցիայի դեմ պայքար.* Իր Հակակոռուպցիոն ռազմավարությունն իրականացնելու նպատակով Վարկառուն՝ ա) իր գործադիր մարմնի միջոցով ընդունել է Կառավարության 2023 թվականի հուլիսի 6-ի թիվ 1135-Ն որոշումը ստորագրված Վարչապետի կողմից, հրապարակված Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգում 2023 թվականի հուլիսի 6-ին և Կառավարության 2023 թվականի հուլիսի 6-ի թիվ 1148-Ն որոշումը ստորագրված Վարչապետի կողմից, հրապարակված Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգում 2023 թվականի հուլիսի 10-ին, ուժի մեջ մտած 2023 թվականի հուլիսի 20-ին՝ Ազդարարման համակարգի մասին օրենքը գործողության մեջ դնելու համար, և բ) Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (ԿԿՀ) միջոցով ընդունել է 2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 01-Ն որոշումը ստորագրված Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախագահի կողմից, հրապարակված Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգում 2023 թվականի դեկտեմբերի 23-ին, ուժի մեջ մտած 2024

թվականի հունվարի 1-ին՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից ստացված նվերների հաշվառման ռեեստրի ստեղծումը հաստատելու մասին, որը հրապարակային կլինի, և նվերների հաշվառման ռեեստրի վարման կարգը հաստատելու մասին:

* * *

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԱՆԱՉ, ԴԻՄԱԿԱՅՈՒՆ ԵՎ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԾՐԱԳԻՐ

## ՀԱՎԵԼՎԱԾ 2

## ՎԱՐԿԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

1.01 Եթե Վարկառուն և ՕՊԵԿ հիմնադրամն այլ համաձայնություն ձեռք չեն բերել, ամբողջ Վարկային միջոցները հատկացվում են որպես մեկ տրանշ՝ ի աջակցություն սույն Համաձայնագրի 1-ին հավելվածում նշված ծրագրի:

| **Վարկի տրամադրում** | **Գումարը (արտահայտված եվրոյով)** |
|---|---|
| Մեկ առհանված տրանշ | 50,000,000 |
| **Ընդամենը** | 50,000,000 |

* * *

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԱՆԱՉ, ԴԻՄԱԿԱՅՈՒՆ ԵՎ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԾՐԱԳԻՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 3

ԱՍՏԻՃԱՆԱԿԱՆ ՄԱՐՈՒՄԸ

1.01. Ստորև բերված աղյուսակում սահմանվում են Վարկի մարման ամսաթվերը և Վարկի մայր գումարի տոկոսները, որոնք ենթակա են վճարման (Վճարման ենթակա գումար) յուրաքանչյուր Մարման ամսաթվի դրությամբ: Եթե Վարկի մայր գումարի առաջին Մարման ամսաթվի դրությամբ վարկային միջոցներն ամբողջությամբ առհանվել են, ապա յուրաքանչյուր Մարման ամսաթվի դրությամբ Վարկառուի կողմից մարվող Վարկի մայր գումարի չափը սահմանվում է ՕՊԵԿ հիմնադրամի կողմից՝ բազմապատկելով՝ ա) առաջին Մարման ամսաթվի դրությամբ առհանված և չվճարված Վարկի ընդհանուր գումարով, բ) յուրաքանչյուր Մարման ամսաթվի համար ստորև նշված Վճարման ենթակա գումարի տոկոսով:

| Թիվ | Մարման ամսաթիվ | Վճարման ենթակա գումար (արտահայտված տոկոսներով) |
|---|---|---|
| 1 | 2029 թվականի դեկտեմբերի 15 | 3.84 |
| 2 | 2030 թվականի հունիսի 15 | 3.84 |
| 3 | 2030 թվականի դեկտեմբերի 15 | 3.84 |
| 4 | 2031 թվականի հունիսի 15 | 3.84 |
| 5 | 2031 թվականի դեկտեմբերի 15 | 3.84 |
| 6 | 2032 թվականի հունիսի 15 | 3.84 |
| 7 | 2032 թվականի դեկտեմբերի 15 | 3.84 |
| 8 | 2033 թվականի հունիսի 15 | 3.84 |
| 9 | 2033 թվականի դեկտեմբերի 15 | 3.84 |
| 10 | 2034 թվականի հունիսի 15 | 3.84 |
| 11 | 2034 թվականի դեկտեմբերի 15 | 3.84 |
| 12 | 2035 թվականի հունիսի 15 | 3.84 |
| 13 | 2035 թվականի դեկտեմբերի 15 | 3.84 |
| 14 | 2036 թվականի հունիսի 15 | 3.84 |

| Թիվ | Մարման ամսաթիվ | Վճարման ենթակա գումար (արտահայտված տոկոսներով) |
| --- | --- | --- |
| 15 | 2036 թվականի դեկտեմբերի 15 | 3.84 |
| 16 | 2037 թվականի հունիսի 15 | 3.84 |
| 17 | 2037 թվականի դեկտեմբերի 15 | 3.84 |
| 18 | 2038 թվականի հունիսի 15 | 3.84 |
| 19 | 2038 թվականի դեկտեմբերի 15 | 3.84 |
| 20 | 2039 թվականի հունիսի 15 | 3.84 |
| 21 | 2039 թվականի դեկտեմբերի 15 | 3.84 |
| 22 | 2040 թվականի հունիսի 15 | 3.84 |
| 23 | 2040 թվականի դեկտեմբերի 15 | 3.84 |
| 24 | 2041 թվականի հունիսի 15 | 3.84 |
| 25 | 2041 թվականի դեկտեմբերի 15 | 3.84 |
| 26 | 2042 թվականի հունիսի 15 | 4.00 |
| | **Ընդամենը** | **100** |

2.01. Եթե Վարկի մայր գումարի առաջին Մարման ամսաթվի դրությամբ վարկային միջոցներն ամբողջությամբ չեն առհանվել, ապա յուրաքանչյուր Մարման ամսաթվի դրությամբ Վարկառուի կողմից մարման ենթակա Վարկի մայր գումարի չափը սահմանվում է հետևյալ ձևով.

ա) Վարկի առաջին Մարման ամսաթվի դրությամբ վարկային միջոցների առհանման չափով Վարկառուն վերադարձնում է առաջին Մարման ամսաթվի դրությամբ առհանված և չվճարված Վարկի գումարը՝ սույն հավելվածի 1.01 կետին համապատասխան:

բ) Առաջին Մարման ամսաթվից հետո կատարված ցանկացած առհանում վերադարձվում է այդ առհանման օրվան հաջորդող յուրաքանչյուր Մարման ամսաթվին այն գումարի չափով, որը սահմանվում է ՕՊԵԿ հիմնադրամի կողմից հետևյալ ձևով՝ առհանման գումարը բազմապատկած կոտորակով, որի համարիչը Մարման այդ ամսաթվի համար սույն հավելվածի 1.01 կետում ներկայացված աղյուսակում նշված տոկոսն է, իսկ հայտարարը այդ ամսաթվի հետ համընկնող կամ դրան հաջորդող Մարման ամսաթվերի համար

սահմանված մնացած բոլոր տոկոսների ընդհանուր գումարն է:

3.01. Որևէ Մարման ամսաթվից վաթսունհինգ (65) օրացուցային օր առաջ կատարված առհանումները համարվում են այդ Մարման ամսաթվին անմիջապես հաջորդող ամսաթվին առհանված և չվճարված՝ որևէ Մարման ամսաթվի դրությամբ վճարման ենթակա Վարկի գումարը բացառապես հաշվարկելու նպատակներով: Չնայած նշված մոտեցմանը՝ տոկոսը և կոմիսիոն վճարը սկսվում են հաշվեգրվել հաշվեգրման համապատասխան ամսաթվերի դրությամբ, երբ կատարվել են այդ առհանումները:

* * *